ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-6/19

ՀՀ, ք. Երևան 05 08 2019թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Մուշեղ Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Վտանգավոր Բարձրություն» ՍՊԸ-ն**, այսուհետ՝ Կատարող, ի դեմս տնօրեն Սուրեն Դանիելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, որոնք համատեղ հիշատակման ժամանակ կանվանվեն՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել տեսական և գործնական դասընթացներ Պատվիրատուի թվով 4 աշխատակիցների համար, այսուհետ՝ Ծառայություն կամ Դասընթաց, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված Ծառայության համար:
1.2. Դասընթացի ծավալը կազմում է 56 ժամ, իրականացման ժամկետը՝ 05.08.2019թ-ից մինչև 11.08.2019թ.: Թեման և ծրագիրը սահմանված են Պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.1.1. Կատարողից պահանջել պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում:
2.1.2. Հետևել Ծառայության մատուցման ընթացքին՝ առանց միջամտելու Կատարողի գործողություններին:
2.2. Պատվիրատուն պարտավոր է՝
2.2.1. Իրականացնել վճարումներ Պայմանագրի 3-րդ կետում սահմանված, կարգով և ժամկետներում:
2.2.2. Եթե որևէ պատճառով Պատվիրատուն հրաժարվում է Պայմանագրով նախատեսված Դասընթացից, ապա նա պարտավոր է իրականացնել վճարում Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում՝ Կատարողի կողմից Պատվիրատուին փաստացի մատուցված Դասընթացի ժամաքանակին համապատասխան գումարի չափով:
2.3. Կատարողը իրավունք ունի՝
2.3.1. Պատվիրատուից պահանջել պարտավորությունների պատշաճ կատարում:
2.3.2. Պատվիրատուից պահանջել վճարում Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:
2.4. Կատարողը պարտավոր է՝
2.4.1. Դասընթացը կազմակերպել և իրականացնել ըստ նախապես համաձայնեցված պահանջների:
2.4.2. Իր հաշվին ապահովել Դասընթացների համար անհրաժեշտ լսարանի, սարքավորումների, հանդերձանքի և նյութերի առկայությունը, ինչպես նաև ընդմիջումների ժամանակ սուրճի, թեյի և այլ հյուրասիրություն: Ուսումնական նյութերը, գրքերը դասընթացներից հետո մնում են աշխատակիցների մոտ:
2.4.3. Գործնական/պրակտիկ դասընթացների ժամանակ իրականացնել Պատվիրատուի աշխատակիցների անվտանգության ապահովման համար բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.4.4. Անհատույց լրացնել իր մեղքով բաց թողնված դասաժամերը:
2.4.5. Դասընթացն անցած և ձեռք բերված գիտելիքների մակարդակի վերաբերյալ քննությունը բավարար արդյունքներով հանձնած յուրաքանչյուր աշխատակցի հանձնել համապատասխան վկայական:
2.4.6. Դասընթացն անցած անձանց համար յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ անցկացնել վերապատրաստման դասընթացներ՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված կարգով, յուրաքանչյուր անձի համար գինը սահմանելով 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագրի 1.1 կետում նշված Ծառայության գինը կազմում է 400 000_(չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը՝ յուրաքանչյուր անձի համար 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:
3.2. Պատվիրատուն Ծառայության համար Կատարողին վճարում է Ծառայության դիմաց Կատարողի կողմից ներկայացված հաշվի երկկողմանի հաստատման օրվանից հետո 15 (տասնհինգ) օրացույցային օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Եթե պարտականությունների չկատարման կամ անպատշաճ կատարման պատճառով վնաս է հասցվել Կողմերից մեկին, ապա մյուս կողմն իրավունք ունի պահանջել վնասների փոխհատուցում:

4.3. Կատարողը պատասխանատու է իր հետ փոխկապակցված անձանց կողմից Պայմանագրի ներքո վերը նշված պարտավորությունների կատարման համար: Պատվիրատուն իրավունք ունի գրավոր ծանուցմամբ անհապաղ դադարեցնել կամ լուծել Պայմանագիրը, եթե Պատվիրատուին հայտնի է դարձել, որ Կատարողը թերացել է սույն կետի համաձայն ստանձնած որևէ պարտավորության կամ երաշխավորության մեջ, կամ խախտել է դրանք:

5. Պայմանագրի գործողությունը և այլ դրույթներ

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների պատշաճ կատարումը:

5.2. Պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

5.3. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող
«Վտանգավոր Բարձրություն» ՍՊԸ
Իր.հասցե՝ ՀՀ,ք.Երևան, Բագյան 1/2 բն. 31,
Գործ.հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Արցախի 1
ՀՎՀՀ 01843418
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 205042221528

Տնօրեն՝

_____ Ս. Դանիելյան

Պատվիրատու
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95
ՀՎՀՀ 01501898
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/հ 1570027609970100

Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝

_____ Մ. Միլիտոնյան

Հավելված 1

Առարկա՝ «Բարձրությունների վրա պարանային և տեխնիկական աշխատանքներ»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1 Անվտանգության հիմունքները:
2. Բարձրության վրա աշխատանքների իրականացման ընդհանուր հիմունքները
3. Օբյեկտիվ և սուբյեկտիվ վտանգները:
4. Բարձրության վրա աշխատանքների իրականացման մարտավարությունը:
5. Անվտանգ աշխատանք առարկայի բովանդակությունը
6.Բարձրության վրա աշխատողի գույքի և հանդերձանքի տեխնիկատակտիկական բնութագրերը՝
- Բարձրության վրա աշխատողի գույքի տեխնիկատակտիկական բնութագրերը:
- Բարձրության վրա աշխատող գույքի փորձարկումը, օգտագործումն ու խնամքը:
- Բարձրության վրա աշխատանքների ժամանակ օգտագործվող հատուկ սարքեր:
- Անվտանգության կանոնները:
7. Մասնագիտական հանգույցների ուսուցում
- Հանգույցների կապման նշանակությունը բարձրության վրա աշխատանքների ժամանակ:
- Հանգույցների խմբերն ըստ նշանակության:
- Հանգույցների կազմման առանձնահատկությունները՝ կախված պարանի տրամաչափից ու տեսակից:
8. Ապահովման տեխնիկայի ուսուցում
- Ապահովման տեխնիկայի ուսուցում:
- Խմբակային ապահովում:
- Անհատական ապահովում կամ ինքնապահովում:
- Փոխադարձ ապահովում շարժման ընթացքում:
- Ապահովում կանգնած դրությամբ՝ ուսի վրայից:
- Ապահովում նստած դրությամբ՝ գոտկատեղից:
- Կոմբինացված ապահովում:
- Ապահովման համար անհրաժեշտ գույք, հանդերձանք:
9.Բարձրության վրա աշխատանքներ
- Պարանի ամրացման տեխնիկական հնարքների ուսուցում:
- Պարանի օգնությամբ վայրէջքների կազմակերպում:/ ութանոց, դեսանտյոռ,կարաբին/
- Պարանի օգնությամբ վերելքի կազմակերպում:/ Ժյումառ, բռնող կապ,/
- Բեռների բարձրացում, իջեցում
10. Անվտանգության կանոնների ուսուցում

Կատարող	Պատվիրատու
«Վտանգավոր Բարձրություն» ՍՊԸ	«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Իր.հասցե՝ ՀՀ,ք.Երևան, Բագյան 1/2 բն. 31,	Հասցե՝ ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95
Գործ.հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Արցախի 1	ՀՎՀՀ 01501898
ՀՎՀՀ 01843418	«Ամերիաբանկ» ՓԲԸ
«Ինեկոբանկ» ՓԲԸ	Հ/h 1570027609970100
h/h 205042221528	Գլխավոր տնօրենի պաշտոնակատար
Տնօրեն	
________________ Ս. Դանիելյան	________________ Ս. Միլիտոնյան